161

ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՒՐ

ԽՈՐՀՐԴԱԾԵՑ
ԻՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԸՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆՓՈՓՈԽ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

·ՏՓԽԻՍ
Տպարան Մ· Շարաձէի, Նիկ·, 21·
Тип. М. Шарадзе, Ник·, 21·
1895

Digitized by Google

Digitized by Google

ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ

ԽՈՐՀՐԴԱԾԵՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Երկրորդ անփոփոխ տպագրութիւն

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Շարաձէի, Նիկ., 21.

Типогр. М. Шарадзе, Ник., 21.

1895

Digitized by Google

81. 97827

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Февраля, 1895 г.

Bayerische
Staatsbibliothek
München

Digitized by Google

Ամենեցուն ժամանակ է եւ ժամ ամենայն իրաց
'ի ներքոյ երկնից:

Ժամանակ ծնանելոյ եւ ժամանակ մեռանելոյ. ժամանակ տնկելոյ եւ ժամանակ խլելոյ զտնկեալն. ժամանակ սպանանելոյ եւ ժամանակ բժշկելոյ. ժամանակ քակելոյ եւ ժամանակ շինելոյ. ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ կոծելոյ եւ ժամանակ կաքառելոյ. ժամանակ ցրելոյ քարինս եւ ժամանակ ժողովելոյ քարինս... ժամանակ խնդրելոյ եւ ժամանակ կորուսանելոյ... ժամանակ պատռելոյ եւ ժամանակ կարկատելոյ. ժամանակ լռելոյ եւ ժամանակ խօսելոյ. ժամանակ պատերազմի եւ ժամանակ խաղաղութեան:

Սողոմոն. Գիրք Ժողովողի. Գ.Լ. Գ.

Bayerische Staatsbibliothek
<36656269560013

Digitized by Google

Digitized by Google

ԱՌ ՄԵԾԱՐՈՑ ՀԱՅՐԵՆԱԿԻՑԴ ԻՄ

ԵՒ ՄՏԵՐԻՄ ՍԻՐԵԼԻ *)

ԹԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ մակագրով մի քանի տող քան խորհրդածեցի եւ 'ի զիր հանի, զոր Ձեր ազնիւ անուան կընուիրեմ. եւ դու որ քան, զիր ու յառաջդիմութիւն կը սիրես, կը խնդրեմ որ յօժարամտիս զայն 'ի լոյս հանել Ձեր անձնանուէր ձեռնտուութեամբ. եւ ձեզ նըման զիր ու քան սիրող Հայոց երիտասարդաց դուն նուիրես, որպէս զի կարդան ու խելամտին թէ ի՞նչ է Ժամանակ եւ իւր անյայտ խորհուրդներ, եւ ո՞րչափ տիրող եւ հզօր է։

Երկնից Նախախնամութիւն իւր ամե-

---

*) Ուղղուած է գրքիս առաջին հրատարակիչ պ. Համբարձումն Աճէմեանին։

Digitized by Google

նիշխան զաւազանը Ժամանակին ձեռք տուեր է. որ կը վարէ եւ կառավարէ մեր աշխարհ ինչպէս ոստիկան մի:

Հէք մարդոյն կեանք՝ Ժամանակի յարաշարժ փոփոխութեան մէջ կը տարուբերի միշտ հողմավար լինելով որպէս չորացած խոտիւր։ Միայն սոսկական եւ ստրուկ մարդ չէ որուն վերայ կ'իշխէ Ժամանակ, այլ եւ աշխարհիս հզօր զահեր նոյն անզօր խոտիւներու պէս կը տարուբերին։

Եւրոպա Ժամանակի խորհուրդ թողուց եւ այժմ իւր հրաշք Թուրքաստանի վերայ դարձուց. մարդ չէր հաւատար որ հինգ հազիւր տարեկան Թուրքիոյ պառաւած եւ ամուլ Մայր երկնելով երկնելով հին աշխարհին համար նոր Մանուկ Սահմանադրութիւն մի ծնէր: Ծնաւ, այո՛, եւ ստրկացած ժողովուրդներ իբրեւ ազատարար կը համարին զայն. բայց տեսցուք թէ դայեակներ ի՞նչպէս պիտի պահեն զայն որ ապրի. երբ նոր վերածնած մանուկ Թուրքաստան կը-ռուով ու սրով մանկակոտոր կը լինի։

Դժխեմ Ժամանակ երկու ձեռք միանգամայն բերաւ Թուրքաստանին վերայ. նոր Օրէնք՝ Սահմանադրութիւն բերաւ, որ նորա յաւիտենական աւերակներ շինէ. պատերազմ

Digitized by Google

բերաւ, որ նորա հին աւերակաց վերայ նորանոր աւերակներ կուտէ։

Բայց աշխարհի պատմութենէն, կարգէն եւ դրութենէն այնպէս կ'իմանամք, որ 'ի վերջոյ յաղթող ժամանակ պատերազմին քանդող ձեռքը կարծելով՝ կ'ընդարձակէ խաղաղութեան եւ յառաջդիմութեան ձեռք. եւ ինչ որ քակեց պատերազմ, Սահմանադիր Օրէնք, հաւասարութիւն եւ ազատութիւն զայն կը շինեն:

Եւ այս իսկ է ժամանակին գործ ու խորհրդանշան, որ աշխարհս քակուելով եւ շինուելով միշտ յառաջադիմէ: Անշուշտ ամեն հնութիւն պէտք է քանդուի. այլ միթէ ինչ որ այսօր կը շինեմք եւ զայն նոր կը համարիմք, կը մնա՞յ։ Քա՛ւ. այն եւս կը կորնչի եւ կը մնայ միայն Յաւիտենականն, ըստ Սաղմոսին. «Նոքա կորնչին եւ դու կաս եւ մնաս յաւիտեան»։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Digitized by Google

Digitized by Google

ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴ ԻՒՐ

Եվ յաւիտենական ժամանակ, քո խորհուրդ, քո գործ և քո նպատակն ինչ է, չըգիտենք. երկնակամարին վերայ պայծառ լուսագունտ մի ունիս, զոր արև կը կոչեմք, և որ անհուն բարձրութենէն ճառագայթներն արձակելով մեր այս երկրագունտ կըլուսաւորէ և կը չափէ մարդկային առօրեայ կեանք։

Քո արևուն տակ մերկ կը ծնի մանուկն, նոյնգունակ մերկ կը մեռնի. գիտես թէ մէկ ձեռքովդ մանուկներն խանձարուրի մէջ կը պատես և կ'օրօրես, միւս ձեռքովդ զանոնք կըտանես գերեզմանին մէջ կը թաղես։ Ասա՛ մեզ, գերեզմանին և խանձարուրին միջոցը ո՞ր-

Digitized by Google

չափ է. և մինչ մայրեր եղերամայր կը լինին, կու լան և կ'ողբան որդեկաց գերեզմանին վերայ, դու կը ծիծաղիս և ծափ կը զարնես։

Մերթ որպէս թէ խնայելով կը թողուս որ մանուկն աճի ու զարգանայ. դո՞ւ արդեօք մերթ գաւազան կու տաս ձեռք որ մանուկ թագ կապէ թագաւոր լինի. մերթ ևս կը թողուս որ ստրկանայ. մերթ ազատ և երջանիկ, և մերթ ստրուկ ապերջանիկ, մերթ հարուստ և մեծատուն, մերթ աղքատ և տնանկ, մերթ հանգիստ ու. մերթ չարչարեալ։

Սակայն ո՛վ հզօր և տիրող ժամանակ, մարդիկ թէ մեծ լինին և թէ փոքր, ոչինչ փոյթ է քեզ, դու զամէնք հաւասար կը ճանաչես, հաւասար դատաստան կ'առնես, և քո արդարութիւն այս է որ թագաւոր և ստրուկ, տէր և ծառայն զամէն միահամուռ մահուան ստուերին տակ դնելով՝ հողն հողով կը ծածկես և կը կնքես հէք մարդոյն կեանքն ու վախճանը։

Ո՛վ գերիշխան ժամանակ, քո գաւազան միահեծան է. աշխարհիս հպարտացող գահերըն այնպէս կըկարծեն թէ չը կայ ամենիշխան տէր մի որ կըտիրէ թագերուն վերայ, թէ չը կայ ամենազօր ձեռն մի որ թագեր կու տայ

Digitized by Google

և կառնու, և թէ չը կայ գերագոյն դատաւոր մի որ թագերուն դատաստանը կը տեսնէ։

Այո՛, կը խոստովանիմք, ո՛վ իշխող ժամանակ, որ դու մեր աշխարհի փայլուն թագեր և գահերն ոտքով կը տարուբերես և կը խաղաս, ինչպէս կը խաղայ մանուկն իւր գընտակին հետը։

Այսպէս չը խաղացի՞ր Մակեդոնացի դիւցազն Աղէքսանդրի հետ. Յունաստանէն մինչև 'ի Բաբիլոն վարեցիր այդ ջախջախիչ աշխարհակալ գնդակը, որ աշխարհիս լեռները տապալեց ու հարթեց։ Ժողովուրդի արեան մէջ թաւալգլոր խաղալով գնաց հասաւ մինչև Բաբիլոնի վիհը, հոն զարկիր գնտակը և գլորեցիր մահուան փոսը, ասելով՝ Ցայս վայր էր քո աշխարհակալութիւն, անդր և ս մի՛ անցանիցես։

Այսպէս խաղացիր դու նաև Ֆրանսիոյ դիւցազն մեծն Նաբոլէոնին հետ. այն հրացեալ պողպատէ գնտակն որ խուն ժամանակի մէջ աշխարհէ աշխարհ գլորելով պիտի փըշրէր իւր ծանրութեան տակ բոլոր ազգեր և գահերը, Վաթէրլոյի դաշտին մէջ վրան հա-

Digitized by Google

տար, ձիոյն սանձ բռնեցիր և մի հարուածովդ գլորեցիր դնտակը մինչև Ովկիանու Ս. Հեղինէ կղզին, ուր հրացեալ աշխարհակուլ գընտակ պաղեցաւ իբրև ջուր, փշրեցաւ և մոխիր դարձաւ գաւազանիդ առաջ։

Ով ժամանակ, հին աշխարհ իւր հին աշխարհակալներով, իւր հին շէնքերով և գերութեան շղթաներով ջախջախեցիր ու անցար. հին աշխարհին յաջորդեց նոր քաղաքակիրթ աշխարհ. գիտութիւն, արուեստ, ճարտարութիւն այնչափ յառաջադիմեց, որուն վերայ կը զարմանան և կ'ապշին մարդիկ, և շատ անգամ չեն հաւատար թէ այդ ամեն՝ մարդուն աշխատութեան և նորա հնարագէտ հանճարոյն արգասիքն են։

Ժողովուրդ, ելէք, յոտին կացէք, բարև բռնեցէք, զի եկաւ նոր քաղաքակիրթ աշխարհ և կ'ողջունէ մեզ. այլ զգուշացէք, ժողովուրդ, դարձեալ սուր կայ 'ի ձեռին և կը մխէ ժողովուրդին կողը։ Մինթէ նոր քաղաքակիրթ աշխարհին գահերը հին աշխարհակալաց ոգին, փառասիրութեան տենչ և գահ գահին վերայ յաղթանակ տանելոյ փառք փոխեց արդեօք։

Digitized by Google

Ո՛չ, ո՛չ, այլ առաւել ևս զօրացաւ ու զայրացաւ այդ ոգին, որ ահաւասիկ ազգ ազգի դէմ և թագաւորութիւն թագաւորութեանց դէմ կ'որոտայ Կրրուբի թնդանօթով, և կ'սպառնան միմեանց ճեռն ու յիշատակ ջնջել աշխարհիս երեսէն։

Ո՞վ կը հաւատայ այլ ևս թէ կռուող դահերն երբեմն կը միանան, զիրեար կըգրկեն, ուխտիւ խաղաղութեան դաշնակցութիւն կը կապեն և խնամով կըգրեն զայն մագաղաթին վերայ որ չպատռի և անջինջ մնայ։ Բայց մեր դարու քաղաքականութեան սոսկալի դիւանագիտութիւնը եթէ չկարենայ այդ մագաղաթի խաղաղութեան դաշնագիրը մի մատով պատռել, սուր ժանիքներով կը պատռէ և արագ-արագ պատերազմի հրովարտակը կը դրէ։

Ո՛վ իմաստուն ժամանակ, մեկնէ մեզ, պատերազմ դո՞ւ կըբերես թէ պետական մարդոց փառասիրութիւն կըհնարէ զայն. կամ թէ նախախնամող արդարութեան մի թագուն խորհուրդն ու գաղտնիքն է, որ ծածկուած է մեր տեսութենէն։ Այլ քա՛ւ թէ այնպէս կարծեմ որ մարդասէր Նախախնամութիւնը պա-

Digitized by Google

տերազմի դաշտին երեսը ծովացած մարդոց ապաժոյժ արիւնով կը զուարճանայ։

Ո՛վ աներևոյթ և անծանօթ ժամանակ. մեծն Սողոմոն քո փոփոխական երևոյթները պէսպէս գոյներով կը նկարագրէ. «Ամենայն իրաց ժամ է և ժամանակ. ժամանակ պատերազմի և ժամանակ խաղաղութեան. ժամանակ շինելոյ և ժամանակ քակելոյ. ժամանակ կորուսանելոյ և ժամանակ խնդրելոյ. ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ. ժամանակ խօսելոյ և ժամանակ լռելոյ»։

Եւ ես կը յաւելում առ այս. ժամանակ ստրկութեան և ժամանակ ազատութեան. ժամանակ չարչարանաց և ժամանակ փրկութեան. ժամանակ զրկանաց և ժամանակ հատուցման. ժամանակ կործանելոյ և ժամանակ կանգնելոյ. ժամանակ ինքնահրաման պետութեան և ժամանակ Սահմանադրութեան։

Ո՛վ խորածածուկ ժամանակ, քանչ խառնակ ու հակառակ երևոյթներ ունիս թշուառ մարդոյն համար, որոյ կեանքն անանջրպետ մի խառնուրդ է երջանկութեան և ասլերջանկութեան մէջ։ Ո՜հ, քանչ անօրինակ ներդաշ-

Digitized by Google

նակութենէ կազմուած են մարդոյն կենաց լարեր, որ կը հնչեն այսպէս մերթ խնդութիւն և մերթ տխրութիւն, ծնունդ և մահ, խլել և տնկել, շինել ու քակել, ծիծաղն ու լաց, կոծն ու կաքաւ, կռիւն ու խաղ, սուրն ու համբոյր, խաղաղութիւն և պատերազմ, ազատութիւն և ստրկութիւն, խօսիլ ու լռել և այլն։ Ի՞նչպէս հնար է որ մարդն ապրի, այս գահավէժ ելեւէջներուն մէջ անկասկած վարէ իւր կեանք և նաւարկելով երթայ իւր նաւահանգիստ գտնէ։

Ո՛վ մարտագոռ ժամանակ, ասա՛ և գուշակէ մեզ, մարդ մարդոյ դէմ, ընկեր ընկերի դէմ, ազգ ազգի դէմ անխնայ կը պատերազմի, սպիտակ դաշտեր արիւն ջրով լուացինք, մեր ճակատամարտ կոտորեցինք և կոտորուեցանք, մարդոց դիակները և կառափներ գահերու տակ գլորեցինք որ բռնութիւն և փառասիրութիւն յագենայ։ Արդեօք խաղաղութեան ցանկալի ժամն հասա՞ւ։

Ո՛վ աւերիչ ժամանակ. բազում ժամանակ է որ արևելեան երբեմն մեր բարգաւաճ և հարուստ աշխարհ հիմնայատակ քանդուեցաւ, շէն շէն գիւղեր և քաղաքներ առ՝ի չգոյէ բնակչաց աւե-

Digitized by Google

բակ դարձան, մնացորդ ժողովուրդ հայրենիքէն հեռացած պանդխտութեան մէջ անարգ ծառայութեամբ կըչարչարուի։ Արդեօք վերաշինութեան ժամն հասաւ։

Ո՛վ կորուսիչ ժամանակ, դո՜ւ արդեօք տարար և քո անցելոյն մէջ կորուսիր ու թաղեցիր Արեւելեան աշխարհին հին փառքն ու վայելչութիւն, տարար ու կորուսիր առաքինի քաջազանց արիական յաղթանակները. տարար և կորուսիր նաև Հայկայ տան փառքն ու հարստութիւն և մեր նախնեաց մնացորդ նշխարներ. և զարդիս տարար և կորուսիր մեր կեանք, հացն ու վաստակ. ո՜հ։ Արդեօք մեր կորստեան գիւտի ժամն հասաւ։

Ո՛վ սգոյ և սգաւորաց ժամանակ. Աւետարան երանի կուտայ սգաւորաց, այլ մինչև յե՞րբ սգանք ու լանք, միթէ մեր աշխարհ մեռելոց աշխա՞րհ է, մեր կեանք գերեզմա՞ն է, մեր գոյութիւն ոչնչութի՞ւն է, մեր բնակութիւն բա՞նտ է, մեր կապանք յաւիտենական շղթա՞յ է. ո՛վ Տէր, ժողովուրդ լի եղև տրտմութեամբ։ Արդեօք իւր մխիթարութեան ու խնդութեան ժամն հասաւ։

Digitized by Google

Ո՛վ զրկանաց ժամանակ. զրկեալ ժողովուրդ աղաղակելով հատաւ իւր յոյս, հատաւ իւր շունչ և ձայն. հնձող մշակներուն բողոք դեռ չհասաւ երկինք։ Բիւրաւոր զրկեալներ դատաւորաց դրռներուն առաջ իբրև այրին այն ժտելով թախանձելով՝ դատ և իրաւունք կը խնդրեն։ Արդեօք դատաստանի և իրաւանց հատուցման ժամանակ հասաւ։

Ո՛վ ջախջախիչ ժամանակ, վարիչ կառքիդ անիւներ կարծրակուռ երկաթէ են և ժանիքներդ պողպատէ. միշտ անսահման հոլովելով ջախջախեցիր ժողովուրդին կառափն ու պարանոցը, ոտք, սրունք, բարձք առհասարակ խորտակեցաւ, անզգայացաւ ժողովուրդ, դարձաւ մի անյարիր անդամալոյծ, ո՞վ կարող է զինքն յարուցանել այսուհետև. — միայն արդար, հաւասար և ազատ Օրէնք։ Արդեօք գետնաթաւալ մեռելատիպ ժողովուրդին վերանորոգ յարութեան ժամն հասաւ։

Ո՛վ ժամանակ, դու գիտես որ հարուածող գաւազանին տակ ստրկական երկիւղով փակուած ժողովուրդին բերանն ու լեզուն՝ որ իւր կեանք պահելու համար սովորած էր միայն լռութիւն պահել և ապտակողին դէմ

Digitized by Google

անմռունչ կերպով միւս երեսը դարձնել, եթէ մերթ ընդ մերթ ազատ մամուլ իւր ազատութեան ճիգ և ձայն հանէր, այն ևս կը ճընշուէր խիստ օրինաց ներքեւ. ուստի մեր աշխարհի զրկանաց և անիրաւութեան բազմատեսակ վէրքեր միշտ ծածուկ մնաց, վերջապէս նեխեցաւ ու փտեցաւ, ամեն ոք դարմանն, դարմանն կ'աղաղակեն։ Արդեօք խորհելոյ, գրելոյ և խօսելոյ ժամանակ հասա՞ւ։

Հասա՛ւ, հասա՛ւ այն ազատաբեր ժամանակ. քեզ աւետիս կու տամ, ժողովուրդ, լըռած լեզուդ և փակուած բերանդ բա՛ց այսուհետև, խօսիր և գրէ՛ որչափ սահմանադիր Օրէնք քեզ ազատութիւն կու տայ. խօսիր երբ կը զրկուիս. խօսիր դատաւորաց առաջ երբ ապիրատ ձեռք զքեզ կ'ապտակեն. խօսիր և իրաւունք խնդրէ. «Եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա՛ վասն չարին. իսկ եթէ բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս»։ Գիտցիր որ ազատ Օրէնք զքեզ չի փրկեր, եթէ դու դարձեալ ստրկութեամբ վարուիս քո ոսոխ դատախազիդ առաջ։

Ո՛վ բարեգուշակ ժամանակ, դու բարի եկիր մեր աշխարհ. քեզ կ'ակնկալէր և կ'սպասէր Թուրքաստանի հինաւուրց Մայր՝ որ ա-

Digitized by Google

մուլ էր և հրաշիւք լղացաւ. ցաւ երկունք կալաւ զինքն իբրև ծննդականի. երկնեց երկնեց և այսօր ծնաւ մեզ համար մի նոր մանուկ Սահմանադրութիւն։ Ցնծացէք, ստրուկ ժողովուրդ, ցնծացէք և ողջունեցէք այս նորածին մանուկ և միանգամայն աղօթեցէք որ կայտառ մնայ, ապրի, զօրանայ և զարգանայ 'ի կատարեալ հասակ։

Ո՛վ նորածին մանուկ Սահմանադրութիւն, քո մայրն զքեզ արիւնով մկրտեց և բազում զոհերով տօնեց քո տօն, որպէս զի Նախախնամութիւն քո կեանք պահէ և դու մեծնաս նոր կեանք տաս մեր աշխարհի մեռած ժողովուրդին, որոյ վերածնունդ կենդանութիւն քո ձեռքն է միայն, զի այսպէս կը վկայեն աշխարհավար իմաստուն վարիչները. և միթէ փորձն ինքնին չի՞ հաստատեր։

Մի՛ դժկամակիր, ո՛վ դժուարածին Մայր, որ մանուկդ ցաւօք և հեծութեամբ ծնար և մարդոց արիւնով մկրտեցիր զայն. դու արևելեան կեդրոնին մէջ կը բնակիս, ինքնին խելամուտ եղիր, այնպէս չկարծես որ այդ դէպքը քեզ միայն դիպեցաւ, վասն զի Արևմըտեան աշխարհի մայրերը խիստ դժնդակ ցա-

Digitized by Google

ւերով ծնան Սահմանադրութեան մանուկ, անհուն արիւնով և զոհերով մկրտեցին զայն. փառք տուր Աստուծոյ, դու շատ բախտաւոր մայր ես. չէ՞ս տեսնար որ ամեն աշխարհ կը սիրեն և կը գորովեն զքեզ. մանաւանդ մեծն Ովկիանոս, որ քո խնամակալ և կնքահայրն է։

Ազատութիւն տուր, ո՛վ մանուկ Սահմանադրութիւն, ազատութիւն կը խնդրեմ քեզմէ որ առ քո սնուցիչ դայեակներն ազատաբար խօսիմ. զի այլ ևս չեմ կարող հին ծառայական ստրկութեամբ խօսիլ։

Ո՛վ դուք... որ նորածին մանուկ Սահմանադրութեան իբրև իմաստուն դայեակ կը հանդիսանայք աշխարհի առաջ, աւագ աչքով հսկեցէք այդ մանկան վերայ, պինդ գրկեցէք և գուրգուրալով պատսպարեցէք զինքն որ սառնամանեաց հովէն չդողայ և հարաւոյ կիզիչ արևէն չտագնապի։

Եւ գիտէք ու կը տեսնէք քաջ որ թէ օտար և թէ նոյն իսկ մեր աշխարհին մէջ դորա թշնամիներ շատ կան, որ կը շրջին ամենուրեք։ Գուցէ դարան գործեն տգէտ ու խաւարագնաց մարդիկ, անտեսանելի մթու-

Digitized by Google

թեան մէջ գողնան այդ մեր սիրական մանուկ և կամ անդէն իւր խանձարուրին մէջ ճնշելով ու նեղելով խեղդեն։ Եւ ինչ կը լինի յայնժամ, գիտէք դուք, ո՜հ, Յետինն չար քան զառաջինն։

Տքնեցէք ուրեմն, տքնեցէք որպէս անքուն պահապան. հզօր կամքով զինեցէք ամեն դարանագործ թշնամեաց դէմ, շուրջանակի պատնէշ փակելով մանուկ Սահմանադրութիւն ընդ մէջ առնելով ողջ պահեցէք որ երթալով աճի ու զօրանայ, իւր օրէնքով տիրէ և ուղղէ Թուրքաստանի աշխարհավարութեան ուղին։

Ահաւասիկ այդ զարգացած Մանուկն է որ Եւրոպիոյ քաղաքակրթութիւն կը ներմուծէ մեր հին աշխարհ. հին ժողովուրդ նոր օրէնքով կը վերանորոգի և Օսմանեան կայսրութեան տան ազատ գաւազան յայնժամ Սահմանադրական թագով կը փառաւորի։

Շատ անագան մնացինք, ափսո՜ս, խելամտինք այսուհետև, հին աշխարհի ժամանակն իւր օրէնքովն անցաւ, նոր ժամանակ նոր օրէնք կու տայ մեզ, զի նոր մարդիկ նոր

Digitized by Google

օրէնք կը խնդրեն։ Հին դարերու նախապաշարմունք այլ ևս ծերացաւ ու զառամեցաւ, պէտք է մեռնի, և աշխարհէս բարձուի իւր յիշատակ, որ եղծեց ու ապականեց արեւելեան մեր կայտառ աշխարհ։ Այսուհետեւ մեր փրկութիւն, մեր կեանք և մեր շահն այն է միակ որ ընդունիմք արեւմտեան ազգաց լոյսըն, օրէնք և քաղաքակրթութիւն և այն ամեն յառաջդիմութեան ճանապարհ, յորում նոքա յառաջացան անցան քան զմեզ, և մեք յետս մնալով՝ ոհ, կը թափառիմք այսպէս խոտորեալ ու մոլորեալ անհետ ու անել բաւիղներու մէջ։

Ո՛վ դժբաղդ արեւելք, աւաղ և եղուկ քեզ, բոլոր ճոխութիւններդ կապտեցաւ քեզմէ. Նախախնամութիւն՝ դրախտի դարաստանը քո մէջ տնկեր էր, անմահական ջուրերու գետերը դաշտերուդ վերայ կը վազէին, երկիրըդ բարեբեր և լեռներդ բոլոր արծաթի և ոսկէհանքերով լի են, չգիտեմ թէ ինչո՞ւ համար դու այդպէս հէք, թշուառ և անճարակ մնացիր։

Եկան հասան վերջին անձկութեանդ օրերը, դու յայնժամ հազիւ ուրեմն ուշաբերեցիր,

Digitized by Google

աչքդ բացիր յանկարծ տեսար որ քաղաքակրթութիւն իւր ճարտար գիտութեամբ քո շէն դրախտն Արևելքէն Արևմուտք փոխադրեր է. պահ մի զարմացար և յետոյ ներքին պատճառներն հետազօտելով հասկցար որ հսկող պահապաններդ քնացած էին։

Եւ ո՞ւր էր նոցա հանգիստ բարձն ու քնարան. այդ ծածուկ տեղ մի չէ, արևուն առաջն է. ես կը տեսնամ և աշխարհ կը տեսնայ զայն. նոր Հռովմ և հին Բիւզանդիոնն է, Վոսփորի չնաշխարհիկ ափունքն է. անդ քնացեր էին խոր 'ի քուն աշխարհի հսկող պահապաններ. անդ կը տեղային Սպիտակ և Սև ծովերէն համայն Թուրքաստանի ժողովուրդին դանձն ու վաստակ և տակաւին բաւական չէր, զի Հռովմայ վերջին և հին Բաբիլոնի անչափաւոր զեղխութեան կեանք անդ նորոգուած էր, այսր մայրաքաղաքին մէջ ճոխաճեմ ապարանքներ կը բարձրանային և գաւառներում գիւղն ու քաղաք կը քանդուէր։

Ո՛վ շռայլող ժամանակ, եկաւ հասաւ արդեօք այն ճշդող և տնտեսող ձեռք, յորում սահմանադիր Օրէնք և ճշմարիտ քաղաքակրթութիւն մեր նոր Հռովմայ անկոպար կեանք

Digitized by Google

տնտեսութեամբ չափաւորէ և մեր աշխարհի պետական վարիչներ ճոխութիւն արդարութեամբ վայելեն, յիշելով աշխատող ժողովուրդին զրկանքն ու չարչարուած կեանք։

Եթէ այսպէս չլինի, և նոր Հռովմ իւր խորգ չփոխէ, զի՞նչ կը լինի արդեօք այս ներկային ապագայ հետեւանքն.—այն կը լինի որ աւասիկ եղև ու կատարեցաւ և տակաւին կը լինի։ Աւա՜ղ, որ անագան զգացին խելամտող ոգիներ, որոց ձեռքն էր Պետութեան վարիչ սանձ. թէ երբ հարստահարիչ ծանրացող ձեռք ժողովուրդին տուն ու տեղ քանդէ, այնուհետև մտաբերել պէտք է թէ երջանիկ Վոսփորին փառքն ու բարձրութիւն կանգուն կը մնա՜յ։

Ո՛վ ժամանակ և Սահմանադրութիւն, պիտի կարճե՞ս այսուհետև այն հարստահարող կողոպտիչ ձեռք, որ հողագործին եղները լծերէն չալձակեն և մաճակալ սրահար առնելով արիւն և արցունք վազեն իւր վարած ակօսներու մէջ, ուր պէտք էր ցորենահատեր ցանուէին, հաց բուսնէր։ Տէրութիւն իւր տասանորդն առնէր, գիւղականին ամբար ցորենով լեցուէր և արքունի գանձարան ոսկեհատ-

Digitized by Google

ներով։ Ո՞վ չգիտեր որ երբ հաց պակսի, հետևապէս գանձն ևս կը պակսի. երկրին կենդանութիւն հացն է, և ո՞վ կարող է ապրիլ առանց հացի։

Ո՛վ ժամանակ և սահմանադիր Օրէնք, պիտի կարճէք այսուհետև կաշառակուր դատաւորաց ձեռք, որ պատրուակով չխաղան քեզ հետ՝ ինչպէս խաղացին մինչև ցարդ Տէրութեան օրինաց գրքերուն հետ. Օրէ՜նք, Օրէ՜նք ասացին և առանց արդար օրինաց գործեցին. առհասարակ դատաւորական աթոռներու վերայ տիրեց օրինաց զեղծումն, և երկրին դատաւորները «Օրէնսդրութիւն՝ բրոնութիւն մեր եղիցի» ասելով բռնաբարեցին զրկեալ բողոքողին իրաւունքը։

Ո՛վ սահմանադիր Օրէնք, դու պիտի քննես, փորձես և ընտրես մեր երկիր կառավարող արժանաւոր և կարող պաշտօնեայներ, հանճարեղ ծերեր և իմաստուն խորհրդականներ. էլ պիտի լռե՞ս և թողուս, որ ըստ առաջնոյն պետական մարդոց կամահաճ ընթացքը շարունակէ, զոր դատելով դատեց ու կշտամբեց կայսերական հրովարտակ։ Ո՜հ, եթէ այնպէս լինի, կ՚ոչնչանայ երկրին վերանորոգու-

Digitized by Google

թեան յոյսն. դու կը մեռնիս կամ թէ մեռած տառ մի կը համարուիս. քեզ ակնկալող ժողովուրդ պիտի նստի ողբայ քո ծնունդ և մօտահաս մահդ։

Ո՛վ պարտուց և իրաւանց հաւասարութեան ժամանակ, ո՛վ Սահմանադրութիւն՝ որ կու գաս օրէնքով թագաւորել, դուք պիտի հանէք ու բառնա՞յք Օսմանեան տէրութեան երկրին այլևայլ ժողովրդոց սրտէն թշնամութեան, ատելութեան և խտրութեան վէս ոգին, որ դան միանան 'ի միասին, մի ամբողջ միութիւն կազմեն Մահմէտական և Քրիստոնեայ ժողովուրդներ, թողուն այն հին ու յաւիտենական ոխն ու մոլեռանդութիւն վառող աշխարհաւեր կրակն. հանդարտին այդ հակառակ տարերքներ, Տաճիկ, Յոյն, Հայն, Հրէայն զիրեար ողջունեն իբրև համաքաղաքացի ժողովուրդ, և ուխտիւ կնքեն ու պահեն այն դաշնադրութիւն՝ զոր սահմանադիր Օրէնք կը նուիրագործէ։

Եւ ի՞նչ է այս հզօր դաշնակցութեան ուխտն, որ Օսմանեան պետութեան զանազան ազգերն մի կապով կը կապէ. այս կապն է մի միայն անխտիր հաւասարութիւն։ Այո՛, հաւասարութիւն իրաւանց և պարտուց մէջ, հա-

Digitized by Google

ւասարութիւն երկրին օրինաց առաջ, հաւասարութիւն հայրենեաց ժառանգութեան մէջ, հաւասարութիւն փառաց և պատուոյ մէջ, հաւասարութիւն զինակրութեան և զինուորութեան մէջ, հաւասարութիւն քաղաքացիութեան և ազնուականութեան մէջ, հաւասարութիւն ուսման և յառաջդիմութեան մէջ, հաւասարութիւն արեան և անձնանուիրութեան մէջ, հաւասարութիւն արժանաւոր վարձուց մրցանակին մէջ. ահաւասիկ այս է սահմանադիր օրինաց անխտիր հաւասարութեան կշիռն ու ճշգրիտ պատկեր։

Ո՛վ Սահմանադրութիւն, զքեզ կը ճանաչեմ որ ճարտար քիմիագէտ ես. եթէ մարդիկ թողուն քեզ, դու անզոյգ անբաղադրելի ազգերու տարերքը հաւասարութեան քուրայիդ մէջ կը դնես, կը հալես և զամեն 'ի մի կը ձուլես։ Փորձենք այս անգամ այդ քո ճարտարութեան հրաշք. տեսցուք, ինչ որ Արևմտեան աշխարհին մէջ գործեցիր՝ մեր անպատրաստ Արևելեան աշխարհին մէջ պիտի յաջողի՞ս։

Կը տարակուսիմք քեզ համար, ո՛վ Սահմանադրութիւն, թէ ի՞նչպէս պիտի շրջիս մեր

Digitized by Google

մութ և անելևոյթ աշխարհին մէջ. մեք այն-
պէս գիտեմք որ լոյս, դաստիարակութիւն և
գիտութիւն միշտ քո յառաջընթաց կարա-
պետն են. դու առանց քո կարապետին եկար
մտար մեր աշխարհ։ Զգիտեմք, լոյս հետ քեզ
պիտի բերես թէ առանց լուսոյ խարխափելով
պիտ շրջիս, և չկարենաս տեսնել այն մեծա-
մեծ վհեր որ կը բացուին քո առաջ. զգոյշ,
զգոյշ, յուշիկ յուշիկ անցիր. մի դպչիր այն
դռներուն՝ որ քո դէմ փակուած են, որպէս
զի քո խիստ և խոժոռ երեսդ չտեսնան։

Անպատրաստ ժողովրդոց ընդարձակ հրա-
պարակին մէջ համարձակ քալէ. բնաւ մի կաս-
կածիր որ անուսումն ժողովուրդն ստամբակի,
դրօշակ բանայ և մաքառի քո դէմ. զի դու
նորանշան, անծանօթ երեւոյթ մի ես նորա
աչքին. նա իրաւունք ունի զքեզ չճանաչելու
երբ դու նորա հարազատածին զաւակ չես.
օտար ես և օտար աշխարհէն կու գաս. քո
միտքն ինչ է. մերի՞ հին աշխարհ վերանորոգել,
մեր նախապաշարմունք բառնալ և մեր հայ-
րենիք ժառանգել կուզես. Արևմուտքը գրա-
ւեցիր, արդ ելար որ Արևելքն ալ գրաւես։

Գրաւէ, գրաւէ. ժողովուրդ կամովին

Digitized by Google

քեզ անձնատուր կը լինի, զի քո ձեռքն ազատարար է. դու մի վհատիր թէ անգէտ ժողովուրդին հետը ինչպէս պիտի վարուիս. հին երկաթէ ձեռք բարուք դաստիարակեր է մեր աշխարհի ժողովուրդ։ Հարստահարութիւն, աղքատութիւն և ծանրատար տառապանքներ առհասարակ կորացուցեր են ժողովուրդին լծավարժ պարանոց, որ անդիմադարձ պատրաստ է յօժարափոյթ կրել քո դիւրատար լուծ։

Դու գիտես ու կը ճանաչես մեր Արևելեան ժողովուրդը, որ առանց գիտութեան ընապէս ճարպիկ է, և այնչափ գռեհիկ չէ որ չգիտնայ իւր ազատութեան և յառաջդիմութեան պայմաններն։ Այո՛, կան կարծիք և մարդիկ, որք տիրապետական ոգին փայփայելով և միշտ փասքուս լինելով կը խօսին և կը համոզեն այսպէս թէ դեռ մանուկ է մեր աշխարհ. դեռ չգիտէ կարդալ և գրել, դեռ ընտրութիւն չունի. ո՞րպէս կարէ որոշել իւր հայրենեաց շահն, բարին ու չար, անպէտն ու պիտանին, ոսկին ու պղինձ, արծաթն ու կապար։

Այսպէս երբ զքեզ իբրև անուս և ան-

Digitized by Google

ընտրող մանուկ կը դատեն, ժողովուրդ, ո՞վ է մեղաւոր, դո՞ւ թէ քո սնուցիչ դայեակներ. որք իբրև օտարամայր՝ կաթ և ուրիշ զօրացուցիչ կերակուր խնայեցին քեզ. ցամաք հացով և կորեակով ապրեցար. սրտիդ և լերդիդ արիւն ցամքելով՝ ողջ կեանքդ ծիւրեցաւ. քո մահն և վախճան մօտ էր. անագան ուրեմն զգացին խորհրդական բժիշկներդ. աճապարեցին դեղ և դարման տանիլ քեզ համար, որպէս զի հնացեալ ծերութիւնդ երիտասարդանայ և դու նոր կեանքով վերածնիս։

Քո դեղն և դարման ինչ է, գիտե՞ս, ո՛վ ստրկացած մահամերձ ժողովուրդ, ազատութիւն և քաղաքակրթութիւնն է. և այն է միակ որ պիտի բառնայ գլխէդ կռփահարիչ հարուածներ, որ քո ազատ ուղեղը ճնշելով ճնշելով ցնդեց. ո՛հ, չթողուց երբէք որ դու ազատ խորհիս, ազատ խօսիս, ազատաբար ճանչնաս քո պարտքն և քո իրաւունք, զոր կը սահմանադրէ անբռնադատ Օրէնք։

Օն ուրեմն, միացեալ ժողովուրդ Թուրքաստանի, սիրէ՛ այսուհետև քո սահմանադիր Օրէնք, պարտիքներդ վճարէ, իրաւունքներդ պահանջէ. մինչև ցարդ անգէտ էիր. այսու-

Digitized by Google

հետև գիտցիր պարտուց և իրաւանց հաւասարակշռութիւն պահել. մինչև ցարդ ամեն զըրկանօք վարուեցան քեզ հետ, ծանր ծանր պարտիքներ պահանջեցին քեզմէ և իրաւունքներըդ զլացան, միշտ զրկուեցար ու բողոքեցիր, բայց քեզ ոչ ոք լսեց. այնուհետև սովորեցար անմռունչ մնալ միշտ կտրիչներուդ առաջ։

Ո՜հ, տակաւին պահանջողներդ այնպէս կը կարծեն որ դու իբրև ալիւրի պարկ մի ես և դեռ անսպառ փոշիներ կան քո մէջ. ուստի զարնելով զարնելով դատարկ պարկիդ փոշիներ հանին. այնպէս որ տաշտիդ մէջ հաց չմնաց և գրպանիդ մէջ մի լումայ. իսկ հարուածեալ պարկդ փարատ փարատ եղաւ։ Այդ շատ բընական է. երբ հացդ բարձուի, այնուհետև հնա՞ր է որ դու մնաս։

Տեսնալով որ պատառ պատառ եղար այժմ, քո նորոգիչներ զքեզ կարկատել կ'ուզեն. չգիտեմ այլ ևս կարկատ կը բռնե՞ս, թէ հնացեալ ձորձիդ վերայ անթափ կապերտ ձըգելով աւելի ևս պիտի բացուին հնութեանդ պատառուածներ. կամ իբրև նոր գինի հին տիկերու մէջ լեցուելով, նոր գինւոյն եռացող զօրութենէն տիկեր պատռին և գինին կորնչի։

Digitized by Google

Այս օրինակը շատ ճիշդ է Թուրքաստանի ժողովուրդին համար, զոր ցոյց կու տայ մեզ Աւետարանի ճշմարտութիւն։

Կը վհատիս արդեօք, ժողովուրդ, երբ անդարման վիճակիդ նկարագիր կը հանեմ մի խըռովիր, մի տագնապիր. մահկանացուաց խորհուրդ և դատաստանը թիւը է. մարդիկ կարճամիտ են. ինչ որ մեր առաջ անհնարին կը թուին, երկնից Նախախնամութեան առաջ միշտ հնարաւոր են։

Ո՞վ կը հաւատար եթէ մի քանի դար յառաջ պատմէին մեզ, որ օր մի Արևմտեան աշխարհի վայրենացած ժողովուրդ ղգօնանայ, գիտութեամբ բարձրանայ, քաղաքակրթութեամբ բարգաւաճի և այսօր համայն աշխարհի օրէնք տայ և նախանձելի օրինակ լինի։

Այսպէս նաև, ո՛վ ապերջանիկ Արևելք, ո՞վ կը հաւատայ, եթէ մարգարէանամ քեզ համար որ դու ևս օր մի երջանիկ Եւրոպիոյ փառաց ու բաղդին պիտի տիրանաս. և այն փառաւոր ապագայի ներկայն այժմէն սկսար. երանի՜ թէ զայն աւարտ հանես և յաղթանակես հնութեան և նախապաշարման վերայ։

Digitized by Google

Թերևս կը հոգաս և կը տատամսիս յոյժ, թէ քաղաքակրթութեան աշխարհաշինութիւն ինչպէս պէտք է հիմնարկել և հաստատել անկայուն և երերուն երկրի մը վերայ՝ ուր շատ հազուագիւտ են իմաստուն ճարտարապետներ և շինութեան յարմարագոյն քարեր. զի մեր աշխարհի քարեր համակ անտաշ են. ոչ նախաձեռն դաստիարակութիւն տաշեր, յղկեր է և ոչ քաղաքակրթութիւն չափակցութեամբ պատրաստեր է. հապա զիարդ հնար է քար քարի վերայ դնել որ զիրեար չեն բռներ, և աւարտել այն մեծագործ շէնքը՝ որ մեր անպատսպար աշխարհին՝ հզօր պարիսպն է. զի այսուհետև Զինական քարէ պարիսպներ անպէտ են. միայն քաղաքակրթութիւն կը պահէ աշխարհ։

Այո՛, ես էլ կը վկայեմ քեզ հետ որ աշխարհաշինութեան քարերդ գիտութեան արուեստով տաշուած և քառակուսի չափուած չեն. բայց գիտե՞ս թէ քանի՞ ազնիւ և բնական յատկութեամբ գեղեցիկ են մեր աշխարհի քարեր. շատ մարմարիոնի հանքեր ունիմք որ ամեն շինութեանց յարմարութիւն ունին, միայն թէ շինող ճարտարապետներ իմաստուն և յառաջատես լինին։

Digitized by Google

Ափսոս, հազար ափսոս, որ մեր աշխարհի մէջ դեռ ամեն բան երերուն և անհաստատ է. շատ անգամ շինող ճարտարապետներ և պատուական անկիւնաքարեր 'ի միասին կ'անարգուին. եթէ ազատամիտ հերոսներ չանան մէկ ձեռքով շինել, խտրութիւն, հնութիւն և նախապաշարմունք միւս ձեռքով կը քանդեն։

Թող քանդեն որչափ ոյժ ունին. քանդողներ միշտ աւերակաց տակ կըմնան, գերեզման կը ծածկէ զիրենք և նոր նոր շինողներ կը ծնին։ Այսպէս է այս աշխարհի գործն բուն աշխարհի սկիզբէն. մարդիկ միշտ շինելով և քանդելով յառաջ կ'երթան. բայց 'ի վերջոյ քանդողներու ձեռք կը լքանի, նկուն կը դառնայ և շինողներ կը յաղթանակեն. զի միոյն գործիքներ տգիտութիւն և հնութիւն են, իսկ միւսոյն՝ գիտութիւն, քաղաքակրթութիւն, և սահման՝ արդարութիւնն է։ Միոյն առաջնորդ խաւար, իսկ միւսին՝ լոյս և գիտութիւն. միոյն իշխանութիւն սուր, իսկ միւսին՝ ազատ Օրէնք։

Բուռն հար, բռնէ այդ ազատ Օրէնք, ով Թուրքիոյ ալեկոծ ժողովուրդ. քանի՞ ժա-

Digitized by Google

մանակ է, ոհ, որ կը ծփաս ու կը տարուբերիս մի լաստափայտի վերայ, որոյ համար կ'ասեն անյոյսներ թէ կապերը քայքայուած են և դու սակաւիկ մի ևս անդեկավար, անապաւէն մնալով՝ պիտի խորասուզիս սեաւ և ճերմակ ծովերու ընդդիմահար ալիքներու մէջ. եղուկ քեզ, քո գերեզման ծովերու անդունդներ պիտի լինին. կէտ ձուկ իւր բերան բացած պիտի կլանէ զքեզ և դու ևս Յովնանու պէս ձկնափոր կենդանի գերեզմանին մէջ փակուելով խորանդունդ դժոխքէն ձայն բառնաս և աղաղակես առ Տէր Աստուած քո։

Օրէնք սիրէ, ժողովուրդ, օրէնք սիրէ. Սահմանադրութեան երեսէն մի՛ փախչիր որ քեզ համար նոր ամրակապ լաստափայտ մի է, որ ծամանակ հրաշիւք բերաւ քեզ Ովկիանու ափունքէն. ապաւինիր այդ օրինագիր լաստին, զոր բաղում դարեր հազիւ կերտեր են զայն և դու պատրաստակազմ գտար։

Այլ թէ տակաւին դանդաղիս, տակաւին մեղկանաս ու մերժես քո վերջին ապաւէն լաստափայտն, տակաւին պաշտես քո հին կարծիքն և ասես որ « մեր աշխարհ նոր օրէնք չսիրէր, մեք Հնութեան մէջ ծնանք,

Digitized by Google

պէտք է հնութեան մէջ մեռնինք. զի հնութիւն՝ մեր խանձարուրն է, պէտք է նաև մեր պատանք լինի։

« Ո՛չ, ո՛չ, չկամիմք փոխել մեր աշխարհի մութ գոյն և մեր մորթ՝ զոր բնութիւն մութ ներկեր է. չկամիմք ճանչնալ մարդկանց հաւասար իրաւունք զոր պետական Աստուած մեծ և փոքր ստեղծեր է. միթէ փոքրիկ ձկներ մեծերուն կերակուր չեն, ինչպէս որ ճնճղուկներ որսական բազէին. ո՞չ ապաքէն բնութեան կարգ և օրէնք այս է բովանդակ աշխարհին վերայ, որ միշտ զօրաւորներ տկարներուն տիրեն։ »

Մի՛ հաւատար, ժողովուրդ. այդ վարդապետութիւնը տիրապետաց ոգին ստեղծեր է, մարդասէր և արդար Աստուծոյն չէ. զի ընդհանուր մարդկութեան կոչումն և կեանք՝ ազատութիւն, արդարութիւն և հաւասարութիւն է Երկնից առաջ և աշխարհիս քաղաքակրթութեան օրինաց առաջ։

Հանէք այդ հնոտի հանդերձներ, հանէք ո՛վ Թուրքաստանի հնասէր ժողովուրդ, հանէք ձեր անձէն ու փոխեցէք, ինչպէս կը փոխէ

օձն իւր շապիկ. այսուհետև դուք այդ պատառոտուն զգեստով կարող չէք աշխարհի առաջ շրջիլ և քաղաքակրթութեան հրապարակի վերայ երևիլ, և կամ թէ երթալ Եւրոպիոյ աշխարհաժողով արուեստահանդէսին մէջ մտնել, ցոյց տալով թէ դուք ևս քաղաքակրթութեան բաժանակից ազգ էք և արևելեան ճարտարութեան օրինակ։ Ո՜հ, կը յիշեմ արդեօք քո անցեալ ազնուականութեան շուքն ու պերճութիւն, որ քան զամենն աշխարհ վեհ ու փառազարդ էիր։

Այլ յայտնէ մեզ, մի ծածկեր, ով անյայտ ժամանակ. դու որ զմարդկային ազգ բիւր ձևերով և գաղափարով ձուլեցիր մինչև ցարդ և տակաւին նորանոր քաղաքակրթութեամբ կը ձուլես, ասա՛ մեզ, Արևելք՝ որ իւր հին ազգերով մինչ 'ի գերեզման խոնարհեր է, այլ ևս պիտի բարձրանա՞ս, արդեօք, ապագայ դարերում ի՞նչ կը պատրաստես դու Արևելից անկեալ ազգերուն համար. ես գիտեմ. շրջող անիւներուդ վերայ առնելով աշխարհիս ազգերը՝ կը դարձնես կը դարձնես, զոմանս 'ի վեր կը հանես և զոմանս 'ի վայր կը տանես, և մերթ ևս անիւներուդ տակն առնելով կը

Digitized by Google

ջախջախես և միայն մնացորդ նշխարներ կը թողուս աշխարհիս վերայ։

Ժողովրդոց մնացորդ նշխարներ դարձեալ յուսալից աչքով քեզ կ'սպասեն, ո՛վ ժամանակ. արդեօք այդ փոշիացած և միանգամայն ողջ մնացած նշխարներն՝ որք աշխարհիս հզօր ու տիրող առիւծներու ժանիքներուն մէջ ծախուելովծախուելով տակաւ տակաւ կ'սպառին. պիտի բերէ՞ս այն ազատութեան օրը, զի այդ փոշիացած նշխարներ մեռելութեան մոխրոց մէջէն յառնեն ինչպէս փիւնիկ, կրկին վերակենդանութիւն ստանան և Աստուծոյ ազատաստեղծ մարդիկ՝ մարդոց բռնացող ժանիքներէն ազատին։

Ո՛վ ժամանակ, ժողովրդոց յոյս միշտ կենդանի է և չեն թերահաւատիր, այլ կը հաւատան միշտ թէ դու պիտի բերես այն գուշակեալ ոսկեդար, յորում գոռոզ առիւծն՝ աշխատաւոր եզին հետ բնակի, ինձն՝ ուլին հետ մակաղի, բարձր գահեր՝ հին հպարտութենէն խոնարհին և ժողովուրդ ազատութիւն համբուրէ։

Բաբէ՜, կը կասկածիմ ես թէ մարդոց այս

Digitized by Google

մեծ հաւատ՝ երաղայոյս է. զի հպարտութիւն և փառասիրութիւն, քանի որ աշխարհ կայ, մարդոց հետ պիտի ապրի և աճի. վասն զի այդ կրից արմատ մարդոց սրտին մէջ ընդաբոյս ու բնական է. պանծացող գիտութիւն կարող չէ զայն մեռուցանել առանց Աւետարանի գերապանծ սիրոյն։ Այո՛, միայն Աւետարանի անբիծ կրօն՝ որ անձնանուիրութիւն և զոհողութիւն կ'ուսուցանէ. այո՛, այդ միայն կ'սպաննէ մարդկային անձնասէր հրպարտութիւն և նորա կամակոր կրից կատաղութիւն։

Ոսկին, հարստութիւն, գահն և թնդանօթ միշտ դաշնադիր կը մնան աշխարհիս վերայ, ժողովրդոց ընկերհաշտական միութիւն այս հզօր դաշնակցաց դէմ պիտի մրցի մինչև 'ի կատարած աշխարհի. թէ իմաստուն ես՝ գուշակէ այժմէն թէ ո՞վ պիտի յաղթահարէ։

Տէր ամենիշխան որ կ'իշխես ժամանակին վերայ, զի ժամանակն և զայն չափող արև և լուսին 'քո կամակատար արբանեակներն են. և կը հաւատամ քեզ, ո՛վ Տէր, որ դու միայն ժամանակին սանձ ձեռքդ առնելով տիեզերք կը կառավարես, ամեն բան քո յաւիտենական օրինաց համեմատ կը վարես և մարդոց բժժո-

Digitized by Google

տած աչքերէն բոլորովին կը ծածկես ժամանակին խորհուրդը։ Անցեալը՝ մեր մոռացկոտ մտքէն կը հանես. ներկայն աղօտ նշմարանքով փոքր 'ի շատէ ցոյց կու տաս և ապագայն՝ քո անհաս խորհրդեան մէջ միշտ թաղուն կը պահես։

Ուրեմն ասա՛ մեզ, ո՛վ Տէր, որ չարն ու բարին աշխարհիս վերայ ելևէջ կ'առնեն, մերթ մին և մերթ միւսն կը տիրէ, և մարդիկ սովորած են ասել՝ ժամանակ չար է կամ բարի. արդեօք չար օր և չար ժամանակն դո՞ւ կը կոչես և կը բերես դայն ազգաց ու ժողովրդոց վերայ. ինչպէս կը վկայէ մարգարէն թէ առանց քո ձեռին՝ ժամանակն ինքնիշխանաբար կը գործէ այս աշխարհիս մէջ. մերթ բարին բերելով և մերթ չարն։

Եթէ այսպէս, ապա ուրեմն չարն ու բարին ժամանակի արգասիքն են, և մարդիկ նախասահմանաբար ստրկացած են ժամանակի բուռն և անխուսափելի իշխանութեան տակ. ողորմելի մարդիկ հարկիւ կը վարին ու կը մղին իբրև խուլ փոթորկին առաջ. հարկիւ ազգեր կը զօրանան ու կ'ընկճին. հարկիւ գահեր կը կործանին և կը կանգնին. հարկիւ այս

Digitized by Google

աշխարհ և մարդկային ազգ ժամանակի պատահարաց ենթակայ է։

Ո՛չ, ո՛վ Տէր, ո՛չ. մարդիկ կը թիւրեն դատաստանը եթէ այսպէս դատեն. մարդիկ անգիտաբար կը զրպարտեն զժամանակն, որ քո բարերար ձեռքին պարգևած կեանքն և լոյսն է։

Եւ ինչո՞ւ համար այսպէս դատել կ'ուզեն մարդիկ, այդ քեզ յայտնի է, Տէր սրտագէտ. որպէս զի մարդիկ քո դատաստանէն փախչելով անմեղադիր մնան և քեզ պատասխան տալու ժպրհին, պատճառելով զպատճառս մեղաց թէ՝ մեզ ինչ մեղ կայ՝ չարիքներ ժամանակ բերաւ և մեք առ 'ի հարկէ հակամիտեցանք չարին։

Խոնարհելով Երկնից առաջ կը խոստովանիմք, Տէր, և մեր խղճի գիտակցութեամբ կը վկայեմք թէ՝ չարիքները չարարուեստ մարդկանց գիւտն է և մարդն է հեղինակ չարեաց ու բարեաց. զի նորա սրտին մէջ կայ ու կը դարանի չարութեան և բարութեան գանձ. և երբ ուզէ զայն ազատաբար 'ի դուրս կբերէ, որպէս ասաց Քրիստոս։

Digitized by Google

Սանձակոծէ, ո՛վ Տէր, սանձակոծէ և փակէ չարագիւտ մարդկանց բերան, որ միշտ չարիքներ բղխելով հեղեղի նման չխեղդեն բարիքները. զի անոնք քո հաւատացեալ զաւակներն են, իսկ չարիքներն՝ աշխարհին. բայց դու քո անհուն անկշիռ մարդասիրութեամբ երկուքին վերայ ևս հաւասար կ'ածես արևդ և անձրևդ, որպէս զի քո անխտիր բարերարութեամբդ ապաշնորհ մարդկանց խստասրտութիւնն ամոքես, որ ճանչնան քո անտրիտուր բարիքն ու երախտիք, դառնան չարութենէն ու պաշտեն զքեզ։

Բայց քո երկիւղած ծառաներ գիտեն ու կը հաւատան և չեն երկբայիր, ո՛վ Տէր, որ դու այս աշխարհը բարձրագոյն խորհրդովդ կը կառավարես. չարն ու բարին 'ի մի կառք զուգակցելով յառաջ կը վարես, ինչպէս անմիաբան հակառակ տարերք. չարերն աշխարհէս չես հաներ, այլ կը թողուս որ բարիներուն հետը միշտ մրցին, չարութիւնն պարտի և առաքինութիւնն յաղթանակէ. ո՛վ, ո՞րչափ զարմանալի է քո խորհուրդ, ո՛վ Տէր, որ առաքինեաց պսակ չարերուն ձեռքով կը հիւսես. և չարն՝ որ չարագիւտ մարդկանց հնարքն է, դու զայն 'ի բարին կը շրջես։

Digitized by Google

Մարդիկ կան որ անգիտաբար գանգատ կը բառնան Նախախնամութեանդ դէմ և կ'ասեն թէ ինչո՞ւ կը թողուս որ չարերն առաւել աճին ու յաջողին աշխարհիս վերայ. ինչո՞ւ համար գայթակղութեան քարերը մարդկային ընկերութեան մէջէն չես բառնար, որ միշտ տկարներու վերայ իյնալով կը ջախջախեն. ինչո՞ւ համար փուշերը տնկեր ես ծաղկաբուրաստանին մօտ, որ քո հոտանոյշ ծաղիկներդ խայթոցահար լինին։ Միով բանիւ, կ'ասեն, թող չարերը բոլորովին սրբէ աշխարհէս, որ բարիներ ազատ մնան և առաւել պտղաբեր լինին։

Սակայն միթէ դու մարդոյն անգէտ խորհրդո՞վ կամ դատաստանո՞վ կը կառավարես աշխարհ, յորում դու միայն բարի սերմն սերմանեցիր, իսկ չար որոմն թշնամի մարդ ցանեց. հրեշտակ ծառաներ տեսան ու զարմացան և զեկուցին քեզ որպէս թէ դու զայն չգիտես. հրաման խնդրեցին որ զորոմն ցորենի արտէն 'ի բաց խլելով որոշեն, որպէս զի բարի ցորեաններդ անխառն մնալով բարգաւաճին։

Կարճամիտ մշակներ խորհուրդ տուին

Digitized by Google

քեզ, ով խորհրդոց Տէր, այլ դու երբէք չը-
կամեցար անսալ. թողէք, ասացիր, որ երկու
բոյսերն ևս 'ի միասին աճին մինչև հնձոց
ժամանակ։ Ուրեմն քո պետական կամքն այն
է որ թէ ցորեան և թէ որոմն, թէ բարին և
թէ չարն խառն ու հաւասար աճին ու ապ-
րին աշխարհիս ագարակին մէջ. որով ցոյց
կու տաս թէ դու բարիները չարերով կ'որո-
շես, և չարերը՝ բարիներով. 'ի վերջոյ բարե-
բոյս ցորենահատներդ արքայութեանդ շտե-
մարանը կը ժողովես. իսկ չար որոմն և ան-
պէտ յարդը անշէջ կրակին կու տաս, որ ճար-
ճատելով այրին ու տոչորին։ Այս է քո ար-
դար հատուցումն նոցա համար, որ քո ծա-
ռաներ աշխարհիս վերայ զրկելով ու հարըս-
տահարելով չարաչար տանջեցին։

Ո՛վ երկնային Սէր, որ մարդոյն սիրով
այս աշխարհ երկիր, որպէս զի անձամբ տես-
նաս ու կրես մարդոյն քաշած վիշտն ու տա-
ռապանք. Երիքովի ճամբուն վերայ շօշափե-
ցիր չարչարուած մարդկութեան բոլոր վէր-
քեր, կրթողո՞ւս այլ ևս որ աշխարհիս բուռն
փորձութիւն իւր ծանր գաւազանով տակաւին
տիրէ ու ճնշէ ստրկացած մարդոյն վերայ, որ
մինչև 'ի գետին կորաքամակ եղեր է։

Digitized by Google

Կը թողուս այլ ևս, Տէր, որ չարերը չարութեամբ զօրանան և չարաչար բռնադատեն քեզ հաւատացող ծառաները. դու ուսուցիր մեզ աղօթել միշտ երկնից Հօր, որ իւր որդիքը չարերուն ձեռքէն փրկէ, և չտայ փորձող ժամանակին ձեռք, որ անխնայ հոլովելով հոլովելով իւր անիւներուն տակ կտրատէ մեր կեանք ու բառնայ մեր հոգին։ Մեք ևս յայնժամ Բաբիլոնի գերեվարեալ ազգին պէս անյուսաբար կոչեմք, «Տէր, հատաւ յոյս մեր և մեռաք»։

Այլ ևս կ'աւարտեմ փանաքի խորհրդածութեանս բան, խոստովանելով որ մեր մանկամիտ մտածութիւն և խորհուրդ՝ անգիտութիւն է քո առաջ. ժամանակին տէր դո՛ւ ես, և դու միայն գիտես նորա անյայտ խորհուրդը։ Մոխիր է մարդոյն սիրտ որ չհաւատայ թէ դու ինչ որ կը կամիս, և կը վճռես Երկնից պետական աթոռէդ, այն կը լինի աշխարհիս վերայ։ Անշուշտ դու ևս քո երկնամայրաքաղաքին մէջ ատեան և դատաստան ունիս. աշխարհի ոստիկան հրեշտակներդ ամեն օր բիւրաւոր բողոքներ կը հանեն քո ատեան, և դու մարդոց սիրտն ու գործքերը քննելով՝ ըստ այնմ կը դատես։ Երբ աշխարհիս վերայ

Digitized by Google

մեղապարտ մարդ զմարդ կը դատի իւր օրէնքով, դու որ մարդոյն Աստուածն ես և գերագոյն դատաւոր, միթէ քո արդարութիւն՝ իրաւունք չունի՞ աշխարհիս ապիրատներու դատաստանը տեսնալ։

Դա՛տ արա, Տէր, դա՛տ արա, զի քո օրէնքըն ու դատաստան միայն ճշմարիտ է. համառօտէ միանգամայն քս երկայնամիտ դատըն ու վճիռ չարերուն վերայ. ինչպէս կը պաղատէր քո ծառայն Դաւիթ, նովին ձայնիւ կը պաղատիմք քեզ։

Դա՛տ արա, Տէր, դա՛տ արա, զի մեր աշխարհ լցաւ անիրաւութեամբ։ Եւ դուգիտես, Տէր արդար և ազատարար, զի մեր փրկութիւն 'ի քէն է 'ի ժամանակի նեղութեան։

ՎԵՐՋ

Bayerische Staatsbibliothek München

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Google

Վաճառւում է կենդրոնական գրավաճառանոցում։

ԳԻՆՆ է 15 ԿՈՊԷԿ

Digitized by Google